ԳԵՂԱՏՈՆԵԿԵՆԻՔ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հունվարի 10-13-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, Վաչե արք. Հովսեփյանի և Զավեն արք. Չինչինյանի ատենապետությամբ, տեղի ունեցավ Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական՝ 6-րդ նիստը:

Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը մանրամասն զեկույց տվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նախորդ չորս ամիսների գործունեության՝ միաբանական ներքին կյանքի, նոր ձեռնադրությունների, Հոգևոր Ճեմարանի, Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնի, հրատարակչական աշխատանքների, Հայաստանում թեմական նոր կառույցների, հայրապետական այցելությունների և միջեկեղեցական հարաբերությունների մասին: Ապա քննարկվեցին Մայր Աթոռի Կանոնադրության մշակման հարցը, ինչպես նաև 1700-ամյակի տոնակատարության կազմակերպական աշխատանքների ընթացքին, թեմերի գործունեությանը, Ս. Էջմիածնի և Հայաստանյայց Եկեղեցու նվիրապետական Աթոռների հարաբերություններին, միջեկեղեցական հարաբերություններին, Մայր Աթոռի տնտեսական կացությանն առնչվող հարցեր:

Նիստի աշխատանքներին մասնակցում էին Գերագույն Հոգևոր Խորհրդի Հայաստանի ու սփյուռքի հոգևորական և աշխարհական անդամները, այդ թվում՝ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արք. Ներսիսյանը, Շիրակի թեմի առաջնորդ Գրիգորիս արք. Բունիաթյանը, Արցախի թեմի առաջնորդ Պարգև եպս. Մարտիրոսյանը, Արմավիրի թեմի առաջնորդ Ասողիկ եպս. Արիստակեսյանը, Ամերիկայի հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Վաչե արք. Հովսեփյանը, Ամերիկայի հայոց Արևելյան թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանը, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Փարիզի հայոց առաջնորդ Գյուտ արք. Նագգաշյանը, Եգիպտոսի հայոց առաջնորդ Զավեն արք. Չինչինյանը, Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ Գիսակ եպս Մուրադյանը, Այուցյաց թեմի առաջնորդ Աբրահամ վրդ. Մկրտչյանը, Ռաֆայել Պապայանը, Գրիգոր Խանջյանը, Հակոբ Փափազյանը, Պիոն Հակոբյանը:

Ժողովի աշխատանքների ավարտից հետո, ամփոփելով նրա արդյունքները, Գարեգին Ա Կաթողիկոսը նշեց. «Սույն ժողովը նախ գեղեցիկ առիթ եղավ, որպեսզի անցնող չորս ամիսների ընթացքում ինչ որ կատարվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կամ Մայր Աթոռի նախաձեռնությամբ՝ արտասահմանում, այդ բոլորի մասին մանրամասն զեկույց տալու ժողովին և վերատեսության ենթարկելու մեր աշխատանքները, որպեսզի առաջիկայում ծրագրենք ավելի եռանդուն ու բեղմնալից

գործունեություն՝ վերաշխուժացնելու, վերակենդանացնելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դարավոր առաքելությունը Հայաստանում և այլուր, որտեղ ունենք հայոց թեմեր:

Երկրորդ, առիթ ունեցանք քննարկելու այն բոլոր ծրագրումները, որոնք կատարվել և կատարվում են Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու պաշտոնական հիմնադրության 1700-ամյակի տոնակատարության առնչությամբ, մասնավորապես քաղաքամայր Երևանում Ս. Գրիգոր Լուսավորչի անունը կրող Մայր Տաճարի կառուցման աշխատանքները ճիշտ կազմակերպելու և վարելու ուղղությամբ, որը կլինի այն կենդանի, պերճախոս վկայությունն այն պարզ ճշմարտության, որ քրիստոնեական հավատքը մեր ժողովրդի համար պատմության հետ առնչված երևույթ չէ սոսկ: Տաճարը պետք է դառնա մեր կենդանի հավատքի վկայությունը և նրա կառուցումը պետք է իրագործվի մեր ողջ ժողովրդի մասնակցությամբ, յուրաքանչյուր անձ պիտի բերի իր քրտինքի կաթիլը այդ նվիրական սուրբ գործին»:

Ատենապետներ վաչե արք. Հովսեփյանը և Զավեն արք. Չինչինյանը հեռուստատեսությամբ ամփոփ տեղեկություններ տվեցին օրակարգի հարցերի մասին՝ հատկապես ողջունելով և ընդգծելով Մայր Աթոռի գործունեության աշխուժացման քաջալերական երևույթը: